



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՄԱՐՏԻ 2024թվականի N 133-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԼՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՉՈՐԱՑԱԾ ԾԱՌԵՐ ԵՎ ՃՅՈՒՂԵՐ ՀԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 16.11.2018 թվականի թիվ 108 որոշումը, «Արենի համայնքի տարածքում ապօրինի ծառահատումները կանխարգելելու և սանիտարական էտը կանոնակարգելու նպատակով» ստեղծված հանձնաժողովի 19.04.2024 թվականի թիվ 2 նիստի արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Թույլատրել Արենի համայնքի Ելփին բնակավայրի մշակույթի տան տարածքում հատել չոր և կիսաչոր բարդու ծառեր՝ որպես վառելափայտ օգտագործելու նպատակով,
- Սույն որոշման կատարման պատասխանատվությունը վերապահել Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական ղեկավար Անդրանիկ Աղախանյանին:



ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՄԱՐՏԻ 2024թվականի N 134-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԼՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆԱԽԿԻՆ ԲՆԱԿԻՉ՝
ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ՍԱՐՄԵՆ ԱՂԱԽԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ
03.05.2022թվականին ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ
ԱՃՈՒՐԴՈՒՄ, ՈՐՊԵՍ ՀԱՂԹՈՂ ՄԱՍՆԱԿԻՑ, ՀՈՂ ԳՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ
ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կարավարության 25.06.1998 թվականի թիվ 387-Ն «Պետական գույքի աճուրդով մասնավորեցման կարգի մասին» որոշման 37-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով ժառանգորդ Անահիտ Գարուշի Նահապետյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Արենի համայնքի Ելփին բնակավայրի նախկին բնակիչ՝ հանգուցյալ Սարմեն Աղախանյանի կողմից 03.05.2022թվականին Արենի համայնքապետարանում կայացած աճուրդում, որպես հաղթող մասնակից, 0.09914 հա հողամաս գնելու նպատակով վճարած 92000 ՀՀ Դրամ գումարը հետ վերադարձնել հանգուցյալի ժառանգորդ հանդիսացող կնոջը՝ Անահիտ Գարուշի Նահապետյանին, քանի որ վերոնշյալ հողմասի նկատմամբ չի կնքվել առուվաճառքի պայմանագիր և հողմասը մնացել է որպես համայնքային սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝



ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՄԱՐՏԻ 2024թվականի N 135-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿԱԶՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ՍԻՄՈՆ ՎԱՐԴԱՆԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ
0.04ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՆԱԽԱԳԾՄԱՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29.12.2011թվականի թիվ 1920-Ն որոշումը, ՀՀ կառավարության 17.06.2021թվականի թիվ 987-Ն որոշմամբ սահմանված կարգի 1-ին մասի 14-րդ կետը, ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումը, ՀՀ <<Հողային օրենսգրքի>> 7-րդ հոդվածի 15-րդ մասը, Արենի համայնքի ավագանու 15.02.2024թվականի թիվ 021-Ա որոշումը, **որոշում եմ՝**

1. Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Սիմոն Վարդանի Դավթյանի սեփականություն հանդիսացող 0.04 հա (ծածկագիրը՝ 10-004-0115-0013, հողատեսքը այլ հողատեսք) գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա, գյուղատնտեսական արտադրական գործառնական դասակարգմամբ՝ անասնաշենք կառուցելու նպատակով:

2. Վերը նշված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գյուղ Ագարակաձոր, 6-րդ փողոց, 3/1 հողամաս:

3. Կառուցապատող Սիմոն Դավթյանին սահմանված կարգով տրամադրել նախագծման թույլտվություն, որի հերթական համարն է 62:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՄԱՐՏԻ 2024թվականի N 136-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԳՏՆՎՈՂ, ԱՐԹՈՒՐ ՎԱՉԱԳԱՆԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ
ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0,14361ՀԱ
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ
ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԹՎՈՎ ԵՐԿՈՒ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք
ընդունելով ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշումը, **որոշում եմ.**

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող,
Վաչագան Թոմասի Սուքիասյանին, Ազատուհի Գվիդոնի Սուքիասյանին,
Նաիրա Վաչագանի Սուքիասյանին, Սոֆյա Վաչագանի Սուքիասյանին և
Արթուր Վաչագանի Սուքիասյանին համասեփականության իրավունքով
պատկանող 0,14361հա բնակավայրերի նշանակության հողամասի
(ծածկագիրը՝ 10-008-0038-0006, գործառնական նշանակությունը՝ բնակելի
կառուցապատման) բաժանման ընթացքում առաջացած.

- 1) 0,06950հա հողամասին տալ հետևյալ հասցեն՝ ՀՀ Վայոց ձորի մարզ,
Արենի, գյուղ Արենի 19-րդ փողոց, 8 բնակելի տուն:
- 2) 0,07411 հա հողամասին տալ հետևյալ հասցեն՝ ՀՀ Վայոց ձորի մարզ,
Արենի, գյուղ Արենի 19-րդ փողոց, 8/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՄԱՐՏԻ 2024թվականի N 137-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ,
ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0,11672ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՅԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք
ընդունելով ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշումը, **որոշում եմ.**

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Մանվել
Հարությունի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող 0,11672հա
բնակավայրերի նշանակության հողամասին (ծածկագիրը՝ 10-008-0020-0005,
գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) տալ հետևյալ հասցեն՝
ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի, գյուղ Արենի 35-րդ փողոց, 19 հողամաս:



ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՄԱՐՏԻ 2024թվականի N 138-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 32 ՀԱՍՅԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՌՈՒԲԵՆ ԱՐՏԱՇԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 2008 թ. հունիսի 10-ի ՀՕ-117-Ն օրենքով և հիմք ընդունելով քաղաքացու դիմումը՝ **որոշում եմ**.

- Ճանաչել Ռուբեն Արտաշի Կարապետյանի, Հոռոմ Մյասնիկի Կարապետյանի, Ալեքսան Ռուբենի Կարապետյանի և Նելլի Ռուբենի Կարապետյանի սեփականության իրավունքը Արենի համայնքի Արենի բնակավայրի 3-րդ փողոց, թիվ 32 հասցեում գտնվող բնակելի տան և օժանդակ կառույցների նկատմամբ:
- Բնակելի տունը և օժանդակ կառույցները կառուցվել են մինչև 2001 թվականը:
- Անշարժ գույքը բավարարում է սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմանները:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՄԱՐՏԻ 2024թվականի N 139-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ,
ՌՈՒԲԵՆ ԱՐՏԱՇԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱՑԻ
ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0,05049ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՋՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ
գբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի (ՀՕ-510-Ն, 26.12.2002թ.) 7-րդ հոդվածի
պահանջներով, **որոշում եմ՝**

Ճանաչել Ռուբեն Արտաշի Կարապետյանի, Հոռոմ Մյասնիկի Կարապետյանի,
Ալեքսան Ռուբենի Կարապետյանի և Նելլի Ռուբենի Կարապետյանի կողմից
փաստացի ավել օգտագործվող 0,05049հա (ծածկագիրը՝ 10-008-0056-0040,
հողատեսքը՝ բնակելի կառուցապատման) բնակավայրերի նշանակության
հողամասի սեփականության իրավունքը:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՄԱՐՏԻ 2024թվականի N 140-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԳՏՆՎՈՂ, ԺԻՐԱՅՐ ՀԵՆՐԻԿԻ ԵՂՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0,122ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԹՎՈՎ ԵՐԿՈՒ
ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք
ընդունելով ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշումը, **որոշում եմ.**

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող,
Ժիրայր Հենրիկի Եղյանին սեփականության իրավունքով պատկանող
0,122հա բնակավայրերի նշանակության հողամասի (ծածկագիրը՝ 10-008-
0066-0012, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման)
բաժանման ընթացքում առաջացած.

- 1) 0,06178հա հողամասին տալ հետևյալ հասցեն՝ ՀՀ Վայոց ձորի մարզ,
Արենի, գյուղ Արենի 13-րդ փողոց, 3 բնակելի տուն:
- 2) 0,06028 հա հողամասին տալ հետևյալ հասցեն՝ ՀՀ Վայոց ձորի մարզ,
Արենի, գյուղ Արենի 13-րդ փողոց, 3/1 հողամաս:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՄԱՐՏԻ 2024թվականի N 141-Ա

ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ
2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1233-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 37-րդ կետով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 80-րդ և 138-րդ կետերով, Ներքին աուդիտի մասին օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջների.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

- Վավերացնել Արենիի համայնքապետարանի ներքին աուդիտի 2024-2026 թվականների ռազմավարական ծրագիրը / N 1 հավելված/:
- Վավերացնել Արենիի համայնքապետարանի ներքին աուդիտի 2024 թվականի տարեկան ծրագիրը՝ համաձայն / N 2 հավելված/:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱԿԱՆ
ՆԵՐՔԻՆ ԱՌՈՒԹՅՈՒՆ

Տարի՝ 2024 թվական

/. ՆԵՐԱՇՆՈՒԹՅՈՒՆ

1. Արևիկի համայնքապետարանի ներքին աուդիտի տարեկան ծրագիրը կազմվել է համաձայն «Ներքին աուդիտի մասին» օրենքի, ներքին աուդիտորների վարչապետի կանոնների, ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտների, Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի ստանդարտների կիրառման մեթոդական ցուցումների, Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցների:

2. 2024 թվականի տարեկան ծրագիրը կազմվել է Արևիկի համայնքապետարանի ներքին աուդիտի 2024-2026 թվականների ռազմավարական ծրագրի հիման վրա: Ի տարբերություն ներքին աուդիտի ռազմավարական ծրագրի, որը սահմանում է հաջորդ երեք տարիների ընթացքում ընդգրկվելիք աշխատանքները, աուդիտի տարեկան ծրագիրը տրամադրում է տեղեկատվություն ներքին աուդիտի առաջադրանքների բնույթի վերաբերյալ, որոնք ակնկալվում են իրականացնել 2024 թվականի ընթացքում:

3. Տարեկան ծրագիրը սահմանում է 2024 թվականի ընթացքում Արևիկի համայնքապետարանում իրականացվող ներքին աուդիտի առաջադրանքների անցկացման նպատակները և աշխատանքի շրջանակները, ինչպես նաև ժամանակացույցը՝ ըստ առանձին առաջադրանքների:

II. ՆԵՐՔԻՆ ԱՌՈՒԹՅՈՒՆԻ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

4. Ներքին աուդիտի 2024 թվականի տարեկան ծրագիրը նախատեսվում է իրականացնել հրավիրված անձի և անհրաժեշտության դեպքում ներգրավված փորձագետների միջոցով: Ներքին աուդիտորն ապահովում է տարեկան ծրագրի իրականացումը մասնագիտական գործունեության ստանդարտներին համապատասխան:

III. ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

5. Աուդիտի ռազմավարական ծրագրի իրականացման նպատակով ներքին աուդիտորի պարտականություններ կատարողը մշակում և Արևիկի համայնքի ղեկավարի քննարկմանն է ներկայացնում 2024 թվականի Արևիկի համայնքապետարանի ներքին աուդիտի տարեկան ծրագիրը: Դիտողությունների և առաջարկությունների հիման վրա լրամշակված տարեկան ծրագիրը և դրա փոփոխությունները հաստատվում են ներքին աուդիտորի պարտականությունները կատարողի կողմից և վավերացվում Արևիկի համայնքի ղեկավարի կողմից:

IV. ՆԵՐՔԻՆ ԱՌՈՒԹՅՈՒՆԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱՅՑՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

6. Արևիկի համայնքապետարանի ներքին աուդիտորի պարտականությունները կատարողի հետ փոխկապակցված գործունեության տեսակներն են՝

- 1) շարունակական մասնագիտական վերապատրաստումը,
- 2) ներքին աուդիտի վերաբերյալ սեմինարների վարումը և դրանց մասնակցությունը:

V. ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7. Արենիի համայնքապետարանում ներքին աուդիտի ստորաբաժանման, այդ թվում ստորաբաժանման ղեկավարի աշխատանքներն իրականացվում են հրավիրված անձի կողմից:

VI. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8. Ներքին աուդիտի գործունեության արդյունքներն ամփոփվում են տարբեր տեսակի հաշվետվություններում: Կարևոր է, որ հաշվետվությունները լինեն արդյունավետ՝ ՍԼրենիի համայնքապետարանի գործունեության բարելավմանը նպաստելու և ՍԼրենիի համայնքի համար հավելյալ արժեք ստեղծելու նպատակով:

9. Ներքին աուդիտորի պարտականություններ կատարողը պետք է Արենիի համայնքի ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին ներկայացնի տարեկան հաշվետվություններ, որոնք ամփոփում են տարվա ընթացքում կատարած ներքին աուդիտի գործունեությունը:

10. Ներքին աուդիտորի պարտականություններ կատարողը պետք է Արենիի համայնքի ղեկավարին ներկայացնի առաջադրանքի հաշվետվություններ, որոնք լինում են միջանկյալ, նախնական և վերջնական:

11. Ներքին աուդիտորի պարտականություններ կատարողը ներքին աուդիտի կանոնակարգի հաստատումից կամ փոփոխության ուժի մեջ մտնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում պետք է Լիազոր մարմին ներկայացնի հաշվետվություն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված 9-րդ հավելվածում ներկայացված 2- րդ ձևով:

12. Ներքին աուդիտորի պարտականություններ կատարողը պետք է տարեկան մեկ անգամ մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը ներկայացնի հաշվետվություն Լիազոր մարմին ներքին աուդիտորների պաշտոնի նշանակման, փոփոխության, որակավորումների և վերապատրաստումների, ինչպես նաև ներքին գնահատումների վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված 9-րդ հավելվածում ներկայացված 3-րդ ձևով:

13. Ներքին աուդիտի տարեկան ամփոփ հաշվետվության բաղկացուցիչ մաս են կազմում նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված 10-րդ հավելվածում ներկայացված աղյուսակները: Ներքին աուդիտորի պարտականություններ կատարողը պետք է գործունեության տարեկան հաշվետվության ամփոփագիրը և եզրակացությունները աղյուսակների հետ մեկտեղ մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը ներկայացնի Լիազոր մարմին, որոնք կազմում են «Ներքին աուդիտի մասին» օրենքով սահմանված ներքին աուդիտի տարեկան ամփոփ հաշվետվությունը:

1.	Լրենիի համայնքապետարան	Համակարգի գնահատման աուդիտ		60	1/3/2024	31/12/2024	Համայնքի ղեկավարի որոշումների նախագծերի պատրաստման գործառնություն	Պատվիրակված անձ	Ներքին աուդիտոր	10
							Կադրային հաշվառում	Պատվիրակված անձ	Ներքին աուդիտոր	10
							Քաղաքաշինական, հողօգտագործման բնագավառի գործառնություններ	Պատվիրակված անձ	Ներքին աուդիտոր	10
							Գույքագրում	Պատվիրակված անձ	Ներքին աուդիտոր	15
							Հաշվապահական հաշվառում, ՀԾ ծրագրի վարում	Պատվիրակված անձ	Ներքին աուդիտոր	15
2.	«Արենի» ՀՈԱԿ	Համակարգի գնահատման աուդիտ		40	1/3/2024	31/12/2024	Հաշվապահական հաշվառում	Պատվիրակված անձ	Ներքին աուդիտոր	8
							Կադրային հաշվառում	Պատվիրակված անձ	Ներքին աուդիտոր	6
							ՀԾ ծրագրի վարման գործառնություն	Պատվիրակված անձ	Ներքին աուդիտոր	6
							Տրանսպորտային միջոցների հաշվառման, շահագործման փաստաթղթաշրջանառություն	Պատվիրակված անձ	Ներքին աուդիտոր	6
							Գնումների գործընթաց	Պատվիրակված անձ	Ներքին աուդիտոր	8
							Գույքագրում	Պատվիրակված անձ	Ներքին աուդիտոր	6
3.	«Ագարակաձոր մանկապարտեզ» ՀՈԱԿ	Համակարգի գնահատման աուդիտ		30	1/3/2024	31/12/2024	Երեխաների շարժի հաշվառում	Պատվիրակված անձ	Ներքին աուդիտոր	5
							Ծնողական վճարների հավաքագրման գործառնություն	Պատվիրակված անձ	Ներքին աուդիտոր	5
							Հաշվապահական հաշվառում	Պատվիրակված անձ	Ներքին աուդիտոր	5
							Կադրային հաշվառում	Պատվիրակված անձ	Ներքին աուդիտոր	5
							Սննդամթերքի մեկու, պահանջագրերի ներկայացման, ձեռք բերման, ծախսման գործառնություն	Պատվիրակված անձ	Ներքին աուդիտոր	5
							Գնումների գործընթաց	Պատվիրակված անձ	Ներքին աուդիտոր	5
4.	«Ունգի մանկապարտեզ» ՀՈԱԿ	Համակարգի գնահատման աուդիտ		30	1/3/2024	31/12/2024	Երեխաների շարժի հաշվառում	Պատվիրակված անձ	Ներքին աուդիտոր	6
							Հաշվապահական հաշվառում	Պատվիրակված անձ	Ներքին աուդիտոր	6
							Սննդամթերքի մեկու- պահանջագրերի կազմման էտոծառնութ	Պատվիրակված անձ	Ներքին աուդիտոր	6

							Ճնողական վճարների հավաքագրման գործառույթ	Պատվիրակված անձ	Ներքին աուդիտոր	6
							Կադրերի հաշվառման գործառույթ	Պատվիրակված անձ	Ներքին աուդիտոր	6
5.	Ներքին աուդիտի իրականացման չնախատեսված դեպքեր	Համապատասխանության աուդիտ		10	1/3/2024	31/12/2024	Ներքին աուդիտի իրականացման չնախատեսված դեպքեր	Պատվիրակված անձ	Ներքին աուդիտոր	10

«ՓԸՐՖԵԲԸ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի տնօրեն



Մ. Բաբայան

**ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՌԻԳԻՏԻ**

Ծրագրի առաջին տարի՝ 2024 թվական
Ծրագրի վերջին տարի՝ 2026 թվական

/ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Արենի համայնքապետարանի ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը կազմվել է համաձայն «Ներքին աուդիտի մասին» օրենքի, ներքին աուդիտորների վարքագծի կանոնների, ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտների, Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի ստանդարտների կիրառման մեթոդական ցուցումների, Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցների և Արենի համայնքապետարանի ներքին աուդիտի կանոնակարգի:

2. Արենի համայնքապետարանի ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը հանդիսանում է աուդիտի երեք տարվա պլանավորման փաստաթուղթ:

3. Այն հանդիսանում է Արենի համայնքապետարանի ներքին աուդիտի գործունեության և զարգացման հիմնական փաստաթուղթը, որում նկարագրվում է աուդիտի նպատակներին արդյունավետ կերպով հասնելու համար ընտրված աուդիտի միջոցները:

4. Ռազմավարական ծրագիրը ղեկավարվում է Արենի համայնքապետարանի երկարաժամկետ նպատակներով և ներքին աուդիտի ոլորտում սահմանված ռազմավարական զարգացման խնդիրներով: Ռազմավարական այս ծրագրի հիման վրա մշակվել է ներքին աուդիտի տարեկան ծրագիրը:

5. Ռազմավարական ծրագիրը և դրա փոփոխությունների նախագծերը քննարկվում են Արենի համայնքի ղեկավարի հետ:

6. Ներքին աուդիտորի պարտականություններ կատարողի կողմից հաստատված ռազմավարական ծրագիրը և դրա փոփոխությունները վավերացվում է Արենի համայնքի ղեկավարի կողմից և ենթակա է վերանայման առնվազն տարեկան մեկ անգամ: Ռազմավարական ծրագիրը հաստատվելուց հետո ներկայացվում է Լիազոր մարմնին՝ ի գիտություն:

II. ՆԵՐՔԻՆ ԱՌԻԳԻՏԻ ԱՌԱՋԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Ներքին աուդիտը անկախ, օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական գործառույթ է, որն ուղղված է Արենի համայնքապետարանի գործունեության արդյունքի մեծացմանը և բարելավմանը: Այն աջակցում է Արենի համայնքապետարանին հասնել իր նպատակներին՝ ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու բարելավման միջոցով:

8. Արենի համայնքապետարանի ներքին աուդիտորի պարտականություններ կատարողի առաքելությունն ու խնդիրներն են.

1) օժանդակել Արենի համայնքապետարանին լինել հաշվետու ողջ հանրության առջև՝ գնահատելով վերջիններիս կողմից օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարումը և իրականացված գործառույթների օգտավետությունը և արդյունավետությունը,

2) օժանդակել Արենի համայնքի ղեկավարին՝ համայնքապետարանում առկա ռիսկերը բացահայտելու և գնահատելու գործում,

3) տրամադրել վերահսկող մարմիններին Արենի համայնքի ղեկավարի կողմից ներկայացված ֆինանսական գործունեության և այլ կատարողականի վերաբերյալ հաշվետվությունների արժանահավատության և հավաստիության վերաբերյալ օբյեկտիվ կարծիք,

4) օժանդակել Արենի համայնքի ղեկավարին հասնելու իր առջև դրված նպատակներին՝ բարելավելով համայնքի համակարգերը և ծառայությունները,

5) իր ներկայությամբ նվազեցնել խարդախության, վատնումների և այլ չարաշահման դեպքերի տեղի ունենալու հավանականությունը,

6) ապահովել աշխատակիցների վարքագծի համապատասխանությունը սահմանված վարքագծի կանոններին:

III. ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

9. Արենիի համայնքապետարանի ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը կազմվել է՝ հիմք ընդունելով աուդիտի ենթակա միավորների կողմից ներկայացված ռիսկերի գնահատումները, բացահայտված խնդիրները, ներկայացված առաջարկությունները և փոփոխությունները:

IV. ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԳՈՐԾՈՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

10. Ներքին աուդիտի գործունեությունը կազմակերպվում է «Ներքին աուդիտի մասին» օրենքի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն և 2011 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1233-Ն հրամաններով սահմանված կարգով և մեթոդաբանությամբ: ՍԼրենիի համայնքապետարանում ներքին աուդիտի աշխատանքներն իրականացվում են հրավիրված անձի կողմից:

11. Ներքին աուդիտի հետագա զարգացման համար իրականացվում է «Ներքին աուդիտի մասին» օրենքի, ներքին աուդիտի մեթոդաբանության, ներքին աուդիտի ստանդարտների և ներքին աուդիտորների վարքագծի կանոնների պահանջների կատարում: Նախատեսվում է յուրաքանչյուր տարի ներքին աուդիտորների մասնակցությունը լիազոր մարմնի կողմից կազմակերպվող շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներին:

Միավոր	Տարի	Ժամկետ (մարդ/օր)	Աուդիտի տեսակ	Ռիսկի խումբ
«ՍԼրենիի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ	2024	60	Համակարգի գնահատման աուդիտ	Բարձր
«Լրենիի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ	2025	110	Համապատասխանության աուդիտ	Բարձր
«Լրենիի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ	2026	90	Համապատասխանության աուդիտ	Բարձր
«Արենի» ՀՈԱԿ	2024	40	Համակարգի գնահատման աուդիտ	Բարձր
«Օրենի» ՀՈԱԿ	2025	60	Համապատասխանության աուդիտ	Բարձր
«Արենի» ՀՈԱԿ	2026	50	Համապատասխանության աուդիտ	Բարձր
«Ազարակաձորի մանկապարտեզ» ՀՈԱԿ	2024	30	Համակարգի գնահատման աուդիտ	Զգայուն
«Ունդի մանկապարտեզ» ՀՈԱԿ	2024	30	Համակարգի գնահատման աուդիտ	Միջին
«Արփի մանկապարտեզ» ՀՈԱԿ	2025	30	Համակարգի գնահատման աուդիտ	Միջին
«Աղավնաձոր մանկապարտեզ» ՀՈԱԿ	2026	30	Համակարգի գնահատման աուդիտ	Միջին
«Արվեստի դպրոց» ՀՈԱԿ	2026	30	Համակարգի գնահատման աուդիտ	Միջին
Ներքին աուդիտի իրականացման չնախատեսված դեպքեր	2024	10	Համապատասխանության աուդիտ	Ցածր
Ներքին աուդիտի իրականացման չնախատեսված դեպքեր	2025	10	Համապատասխանության աուդիտ	Ցածր
Ներքին աուդիտի իրականացման չնախատեսված ՀՀ դեպքեր	ԶԿ	10 X-7	Համապատասխանության աուդիտ	Ցածր

«ՓԵՐՖԵԿՏ ԱՌԻԴԻՏ» ՍՊԸ-ի տնօրեն

Ա. Բաբայան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՄԱՐՏԻ 2024թվականի N 142-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԳՏՆՎՈՂ, ԳԱՌՆԻԿ ՊԵՊՈՅԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0,02017ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱԶՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ
գրադեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի (ՀՕ-510-Ն, 26.12.2002թ.) 7-րդ հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ճանաչել Գառնիկ Պեպոյի Ղազարյանի կողմից փաստացի
ավել օգտագործվող 0,02017հա (ծածկագիրը՝ 10-008-0170-0001,
հողատեսքը՝ Խաղողի այգի) գյուղատնտեսական նշանակության
հողամասի սեփականության իրավունքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdзор@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՄԱՐՏԻ 2024թվականի N 143-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԳՏՆՎՈՂ, ՎԱՋԻԿ ԷԼԲՐՈՒՍԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0,20396 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ
ԹՎՈՎ ԵՐԿՈՒ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք
ընդունելով ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշումը, **որոշում եմ.**

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող,
Վաչիկ Էլբրուսի Սողոմոնյանին սեփականության իրավունքով պատկանող
0,20396հա բնակավայրերի նշանակության հողամասի (ծածկագիրը՝ 10-008-
0018-0016, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման)
բաժանման ընթացքում առաջացած.

- 1) 0,14396հա հողամասին տալ հետևյալ հասցեն՝ ՀՀ Վայոց ձորի մարզ,
Արենի, գյուղ Արենի 33-րդ փողոց, 5 բնակելի տուն:
- 2) 0,06 հա հողամասին տալ հետևյալ հասցեն՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի,
գյուղ Արենի 33-րդ փողոց, 5/1 հողամաս:



ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՄԱՐՏԻ 2024թվականի N 144-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԳՏՆՎՈՂ, ՀՄԱՅԱԿ ՍԱՄՍՈՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԵՎ ԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿԻ
ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ

0,0356ՀԱ ԵՎ 0,0394ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ՄԵԿ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ
ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 7-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և ՀՀ Կարավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշման 5-րդ մասի 28-րդ կետի 2 և 3 ենթակետերի պահանջներով՝ Արենի համայնքի ղեկավարը **որոշում է.**

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, Հմայակ Սամսոնի Վարդանյանին և Անի Անդրանիկի Մարգարյանին համասեփականության իրավունքով պատկանող 0,0356հա (ծածկագիրը՝ 10-008-0070-0012) և 0,0394հա (ծածկագիրը՝ 10-008-0070-0011) բնակավայրերի նշանակության հողամասերը միավորել:

2. Վերը նշված հողամասը գրանցել որպես մեկ առանձին միավոր և տրամադրել հետևյալ հասցեն՝ ՀՀ ՎՁՄ Արենի, գյուղ Արենի, 14-րդ փողոց, 5 հողամաս:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՄԱՐՏԻ 2024 թվականի N 145-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 15 ՄԱՐՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 55
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԹՈՒՅՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Արենի համայնքի ղեկավարի 15 մարտի 2024 թվականի N 55
շինարարական թույլտվության 2-դ կետի մեջ փոխել «15 մարտ 2024-15
մարտ 2024» թվերը փոխարինել «15 մարտ 2024-15 մարտ 2027» թվերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՄԱՐՏԻ 2024թվականի N 146-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,21679 ՀԱ ՀՈՂՄԱՍԸ
ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի
Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի պահանջներով **որոշում եմ՝**

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող,
0,21679 հա գյուղատնտեսական նշանակության հողամասը (ծածկագիրը՝
10-008-0110-0010, հողատեսքը՝ վարելահող) գրանցել որպես առանձին
միավոր՝ համայնքային սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdзор@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 147-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ և
ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ ՀԵՏԵՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ **որոշում եմ՝**

1. Ստեղծել Արենի համայնքում սուբվենցիոն ծրագրերով իրականացվող շինարարական
աշխատանքների որակի և ընթացքի նկատմամբ հսկողություն իրականացնող մշտական
հանձնաժողով հետևյալ կազմով՝

1. Մհեր Ասատրյան՝ համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ, հանձնաժողովի նախագահ,

2. Սմբատ Սարգսյան՝ համայնքապետարանի աշխատակազմի առաջատար
մասնագետ, հանձնաժողովի անդամ,

